Թաթար զօրուն՝ որ յարեւելս և զայլ մեծամեծսն, և պատուեալ ի նոցունց, զտեղի էառ յոտն Արագածու, հանդէպ լերինն Արայի՝ ի գիւղն որ կոչի Վարդենիս[1]) ի տան իշխանին, զոր Քուրդ անուանէին, Հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ և որդիք իւր Վաչէ և Հասան յազգէ Մամիկոնեանց (1254) . . . և այլ իշխանք, յոլովք, զորս ընդ իւր առեալ արքային (Հեթմոյ) չոգաւ ընդ աշխարհն Աղուանից և ընդ դուռն Դարբանդայ, որ է պահակն Ծորայ, առ Բագոյն և առ Սարգախ որդի նորա . . . որք և առաքեցին զնա առ Ղանն Մանկու ընդ երկարաձիգ ճանապարհն յանկոյս ծովուն Կասպից . . . և մեծարեցաւ ի նմանէ (Հեթում ի Ղան Մանկուէն) ըստ արժանւոյն, և կացեալ ընդ նմա աւուրս յիսուն և հրովարտակ նշանաւոր առեալ, վերադարձաւ, զի մի ոք իշխեսցէ նեղել զաշխարհ նորա . . . » և այլն . . .

Կիրակոս պատմագրի յիշեալ պատմութիւնը աւելի ընդարձակ և տեղն ու տեղը մանրամասն գրած լինելոյ պատճառաւ Հայոց պատմութեան մէջ (Հ. Միքայէլ Վ. Չամչեան. Գ. 247—249), կարեւոր համարեցի օրինակել և դնել այս տեղ ընթերցողաց գիտութեան և ծանօթութեան համար, որ է հետեւեալն.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՉԱՄՉԵԱՆ. Գ. 247, 248 և 249.

1252 *Ամ.* « . . . Հեթում արքայ Հայոց իբրեւ լուաւ թէ թագաւորեալ է ի տեղի Դիուկայ Մանգոյ խան, կամեցաւ հաստատել և ընդ նմա զդաշն սիրոյ և խաղաղութեան. սմին իբրի գբրեաց թուղթ առ Բաթու մեծ խանն Հիւսիսոյ, զի նա լիցի միջնորդ այսր նորոգութեան դաշին, և յղեաց զայն ի ձեռն իմաստուն Բարսեղ քահանայի . . . .

Ի յաջորդ ամի ընկալաւ Հեթում արքայ ի Բաթու իշխանէն զպատասխանի թղթոյ իւրոյ, զոր յղեալ էր ի ձեռն Բարսղի քահանայի, որ և Հրաւիրէր զարքայ՝ գալ առ ինքն, և ապա գնալ

---

[1]) Վարդենիս գիւղը գտնւում է Թիւրքական արեւմտեան հանդէպը՝ Ագց գիւղի մօտ՝ Խաչմանքից և Տեղերայ վանքից դէպի հարաւ. այժմ Վարժենիս։